**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

# ՈՐՈՇՈՒՄ

11.02. 2014թ. N58-Ա

ք. Ստեփանակերտ

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 14-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1-Ն որոշման 19-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող անշարժ գույքի կադաստրի զարգացման 2014 թվականի համալիր ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ** **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված

Լեռնային
Ղարաբաղի
Հանրապետության
կառավարության
2014 թվականի փետրվարի 11-ի
N 58-Ա
որոշման

**2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳԻՐ**

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

## ԳԼՈՒԽ I

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ 1:2000 ՄԱՍՇՏԱԲԻ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՈՒԹԱԳՐՈՒՄ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ

| Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման | | | |
|---|---|---|---|
| բաժինը | խումբը | դասը | ծրագիրը |
| 01 | 06 | 01 | 04 |
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | |

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ 1:2000 ՄԱՍՇՏԱԲԻ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՈՒԹԱԳՐՄԱՆ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

### 1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքը ծածկված է 1963 թվականի կոորդինատային համակարգում 1:10000 մասշտաբի տեղագրական հիմքով մոտ 95%-ով, 1:50000 և 1:10000 մասշտաբի 1942 թվականի կոորդինատային համակարգում՝ տեղագրական քարտեզներով 100%-ով, որոնք հրատարակվել են 1948-1988 թվականներին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության գեոդեզիայի, քարտեզագրության գլխավոր վարչության և ռազմատեղագրական վարչության կողմից և 1988 թվականից չեն թարմացվել՝ բացառությամբ 6 հատ 1:50000 մասշտաբի տեղագրական քարտեզների, որոնք թարմացվել են պաշտպանության բանակի ռազմատեղագրական ծառայության կողմից:

2000 թվականից առայսօր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 165 համայնքներում իրականացվել է կադաստրային քարտեզագրում՝ բնակավայրերի սահմանում 1:1000, իսկ վարչական սահմաններում սեփականաշնորհված տարածքները՝ 1:2000, 1:5000 մասշտաբներով: Ստացված կադաստրային քարտեզների հիման վրա տեղանքի ռելիեֆը արտահայտված չէ, իսկ մինչև 2004 թվականը ստեղծված 52 համայնքի

կադաստրային քարտեզներում, որոնք ստեղծվել են առանց համապատասխան գործիքների և ցածր մասնագիտական պատրաստվածության աշխատողների կողմից, կան սխալներ և անճշտություններ: Մասնավորապես, հանութագրումը կատարվել է հիմնականում չափաժապավենի միջոցով՝ առանց հաշվի առնելու տեղանքի կառուցապատման բնույթը և այլն: Օգտագործվել են 1998 թվականի հողերի սեփականաշնորհման հանձնաժողովների կողմից ստեղծված հողաբաժանման նյութերը: Գյուղատնտեսական նշանակության հողերից քարտեզագրվել են միայն սեփականաշնորհված հողերը, որոնք չեն կապակցվել գեոդեզիական կոորդինատային ցանցին, ինչպես նաև փոխկապակցված չեն եղել միմյանց հետ, որի պատճառով հողակտորների տեղադիրքերը և չափերը ստացվել են ոչ ճիշտ, արդյունքում ստացվել է աղավաղված կադաստրային քարտեզ:

Ելնելով հանրապետության տարածքի առանձնահատկություններից, տնտեսության զարգացման վիճակից և հեռանկարներից՝ Լեռնային Ղարաբաղի Յանրապետությունում բազային մասշտաբի քարտեզ կարող է հանդիսանալ 1:10000 մասշտաբի տեղագրական քարտեզը, իսկ բնակավայրերի համար՝ 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերը:

2013 թվականին իրականացվել են համայնքների, բնակավայրերի 500.05 հեկտարի նկատմամբ 1:2000 մասշտաբի տեղագրական հանութագրման աշխատանքներ, 4207 անշարժ գույքի միավորի նկատմամբ կադաստրային քարտեզագրման աշխատանքներ, 100 հեկտարի նկատմամբ կադաստրային քարտեզների թարմացման աշխատանքներ և պետական, հատուկ խտացման ցանցի 120 կետերի տեղադրման, չափման և հավասարակշռման աշխատանքներ:

## 2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Քարտեզագրական աշխատանքների իրականացման հիմնական նպատակը կադաստրային քարտեզներում ընդգրկված տարածքների վերականգնումն է ժամանակակից տեխնոլոգիաների և սարքերի կիրառմամբ, ինչպես նաև 1:2000 մասշտաբի տեղագրական հանույթի իրականացումը, կադաստրային քարտեզներում կատարված փոփոխությունների քարտեզագրումը, որի նպատակը հանրապետության պետական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին, տնտեսության տարբեր ճյուղերին, ժամանակակից պահանջներին համապատասխան քարտեզագրական նյութերով ապահովումն է, ինչպես նաև տեղագրական, կադաստրային և թեմատիկ քարտեզների ու դրանց մասին տեղեկատվական բանկի ստեղծումն ու կառավարումը:

## 3. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ըստ հանրապետության զարգացման պահանջների՝ անհրաժեշտություն է առաջանում Լեռնային Ղարաբաղի Յանրապետության բնակավայրերում իրականացնել 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի ստեղծման աշխատանքներ համապատասխան գեոդեզիական կոորդինատային համակարգում: Աշխատանքներն իրականացնելու ընթացքում դրանք պետք է միաժամանակ համադրվեն արդեն ստեղծված կադաստրային քարտեզների հետ, նոր առաջացած գույքի միավորները (շենքեր, շինություններ, ապօրինի կառույցներ) և պարտադիր սերվիտուտի ենթակա տարածքներն արտահայտելու տեղագրական հատակագծերի վրա:

Կադաստրային քարտեզներում պետք է լրացուցիչ թվայնացվեն դաշտային աշխատանքների ընթացքում կատարված լրացումները և բացթողումները:

Յուրաքանչյուր բնակավայրի հանութագրման համար անհրաժեշտ է կազմել տեխնիկական նախագիծ, որում արտահայտված լինեն աշխատանքների նպատակը, գեոդեզիական հիմքի ստեղծումն ու աշխատանքների կատարման եղանակները: Աշխատանքներն ավարտելուց հետո անհրաժեշտ է կազմել աշխատանքների իրականացման տեխնիկական հաշվետվություն, որից հետո ստեղծված նյութերը սահմանված կարգով հանձնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Տեղեկատվական կենտրոնին` քարտեզագրագեոդեզիական ֆոնդի ստեղծման և պահպանման նպատակով:

## 4.ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացման արդյունքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքի կառուցապատված և տնտեսապես ակտիվ օգտագործվող տարածքներում պետական գեոդեզիական և խտացման ցանցերի խտությունը կհասնի մեկ կետ 12 քառ. կմ, իսկ չկառուցապատված տարածքներում մեկ կետ 20 քառ. կմ տարածքի վրա, կստացվեն բնակավայրերի պետական մասշտաբային շարքի 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերն իրենց գեոդեզիական հիմքով: Ստեղծված նյութերը հիմք են հանդիսանալու գերատեսչական տարբեր ոլորտների, այդ թվում` քաղաքաշինության, բնապահպանության, արդյունաբերության, անշարժ գույքի կադաստրի, տարածքների պլանավորման, հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաների կազմման, վարչական և տնտեսական գործունեության, արտակարգ իրավիճակների ժամանակ օպտիմալ և օպերատիվ որոշումների կայացման, գլխավոր հատակագծերի ստեղծման և առանձին տարածքների զարգացման օպտիմալ պլանավորման, ստորգետնյա և վերգետնյա հաղորդակցուղիների նախագծման և այլ խնդիրների լուծման համար:

## 5.ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

2014 թվականին ծրագրի իրականացման համար անհրաժեշտ գումարը կազմում է 48 193.2 հազար դրամ:

| Հ/Հ | Աշխատանքի անվանումը | Չափման միավորը | Ծավալը | Միավորի արժեքը (դրամ) | Ընդամենը գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1. | 2000-2004 թթ. ներառյալ առանց հանութային հիմքի կատարված համայնքների, ինչպես նաև կադաստրային քարտեզագրում չիրականացված համայնքների բնակավայրերի 1:2000 մասշտաբի տեղագրական հանութագրում | հա | 500.0 | 26400 | 13200 |
| 2. | 2004–2008թթ. կադաստրային քարտեզագրում իրականացված համայնքների բնակավայրերի 1:2000 մասշտաբի տեղագրական հանութագրում | հա | 200.13 | 17147 | 3431.6 |
| 3. | 2000-2004 թ.թ. ներառյալ առանց հանութային հիմքի կատարված համայնքների կադաստրային | անշարժ գույք | 4195 | 3380 | 14179.1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | քարտեզագրում | հ միավոր | | | |
| 4. | 2004-2008 թ.թ. կատարված կադաստրային քարտեզների թարմացում և նոր կատարվելիք կադաստրային քարտեզագրում | անշարժ գույքի միավոր | 50 | 3150 | 157.5 |
| 5. | Կադաստրային քարտեզագրում | հա | 530 | 32500 | 17225.0 |
| | | | | | 48193.2 |

# ԳԼՈՒԽ II

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ, ԳՐԱՆՑՈՒՄ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏԱԴԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ

| Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման | | | |
|---|---|---|---|
| բաժինը | խումբը | դասը | ծրագիրը |
| 01 | 06 | 01 | 05 |
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | |

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏԱԴԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

### 1. ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի իրականացման նպատակը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքի աշխարհագրական օբյեկտների անվանումների հաշվառումը և գրանցումն է, նրանց վերաբերյալ տեղեկատվական բանկի ստեղծումը, վարումը և տեղեկատվության տրամադրումը, ինչպես նաև բնագավառի կանոնակարգումը, որն ունի ոչ միայն պետական, այլ նաև միջազգային նշանակություն: Աշխարհագրական անվանումներն արտահայտվում են միջազգային պայմանագրերում և համաձայնագրերում, փոստային ծառայության տեղեկատուներում, բոլոր տեսակի քարտեզներում և փաստաթղթերում:

Ոլորտի զարգացման համար կարևորագույն խնդիրն է աշխարհագրական անվանումների միասնական տեղեկատվական բանկի ստեղծումը, վարումը և գրանցման ավտոմատ համակարգի ներդրումը:

### 2.ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Այս ծրագրով 2014 թվականին նախատեսվում է իրականացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 40 համայնքների աշխարհագրական անվանումների հաշվառման աշխատանքներ և 71 համայնքների աշխարհագրական անվանումների գրանցման աշխատանքներ՝ համաձայն աղյուսակ 1-ի՝

*Աղյուսակ 1*

| Հ/Հ | Աշխատանքների անվանումը | Չափման միավորը | Ծավալը |
|---|---|---|---|
| 1. | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխարհագրական օբյեկտների անվանումների հաշվառման աշխատանքներ | | |
| 1) | աշխարհագրական անվանումների հաշվառման դաշտային աշխատանքներ (տեղերում անվանումների ճշգրտում, նոր աշխարհագրական օբյեկտների անվանումների հավաքագրում և սահմանների գծագրում) | համայնք | 40 |
| 2) | աշխարհագրական անվանումների հաշվառման գրասենյակային աշխատանքներ (տեղագրական քարտեզներից տեղանունների վերհանում, թարգմանում, առկա նյութերի ուսումնասիրություն, աշխարհագրական օբյեկտների կոորդինատների որոշում, հաշվառման ձևաթղթերի լրացում) | համայնք | 40 |
| 3) | աշխարհագրական անվանումների գրանցման աշխատանքներ | համայնք | 71 |

Վերոնշյալ աշխատանքները նախատեսվում են իրականացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Գեոդեզիայի, քարտեզագրության, հողաշինարարության և անշարժ գույքի գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից:

## 3.ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Աշխարհագրական անվանումների ոլորտում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված աշխատանքների արժեքն ըստ նախատեսված ծավալների կազմում է 1600.0 հազար դրամ:

| Հ/Հ | Աշխատանքների անվանումը | Չափման միավորը | Ծավալը | Միավորի արժեքը (դրամ) | Ընդհանուր գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1. | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխարհագրական օբյեկտների անվանումների հաշվառման աշխատանքներ | | | | |
| 1) | աշխարհագրական անվանումների հաշվառման դաշտային աշխատանքներ | համայնք | 40 | 16465 | 658.600 |
| 2) | աշխարհագրական անվանումների հաշվառման գրասենյակային աշխատանքներ | համայնք | 40 | 16465 | 658.600 |
| 3) | աշխարհագրական անվանումների գրանցման աշխատանքներ | համայնք | 71 | 3981 | 282.800 |
| | **Ընդամենը** | | | | 1600.0 |

## 4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Տվյալ ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչական տարածքի աշխարհագրական օբյեկտների հաշվառված նյութերը և գրանցման ավտոմատացված համակարգը, ինչպես նաև աշխարհագրական անվանումների պետական քարտադարանը:

Հավաքագրված նյութերի հիման վրա հնարավոր կլինի ստեղծել և հրատարակել պաշտոնական տեղեկատուն՝ գազետիրը, տարբեր թեմատիկայի բառարաններ, տեղեկատուներ և ցանկեր:

## ԳԼՈՒԽ III

## ՀՈՂԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

| Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման | | | |
|---|---|---|---|
| բաժինը | խումբը | դասը | ծրագիրը |
| 01 | 06 | 01 | 06 |
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | |

## ՀՈՂԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

## ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն 2003 թվականից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 30-ի N 63 որոշմամբ սահմանված կարգով իրականացնում է անշարժ գույքի համակարգված դիտարկումներ և անշարժ գույքի շուկայի վերլուծություններ: Դրանց արդյունքում գույքահարկի բազայի ձևավորման համար բացահայտվել են անշարժ գույքի վիճակի և արժեքի վրա ազդող էական գործոնները, դուրս են բերվել բազային արժեքները, սահմանվել են գնահատման կարգերը, շենքերի, շինությունների տարածագնահատման գոտիների սահմանները, գոտիների անցման գործակիցները, բնակավայրերի հողերի օտարման նպատակով բազային գները և տարածագնահատման գոտիները:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղական համայնքներում գյուղնշանակության հողերի հարկի բազայի ձևավորման համար օգտագործվում են հողային կադաստրի ժամանակավոր արժեքներ, իսկ հասարակական և արտադրական հողերի համար՝ գյուղատնտեսական նշանակության հողերի միջին կշռված արժեքներ: Քաղաքային համայնքների համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից սահմանվել են բնակավայրերի հողերի միջինացված արժեքներ :

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումներից հավաքագրված տեղեկատվության մշակումը, վերլուծություններն ու ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռում իրականացնելու անշարժ գույքի և անշարժ գույքի շուկայի համակարգված դիտարկումներ ,որի արդյունքները՝

1) կօգտագործվեն անշարժ գույքի միասնական գնահատման մեթոդիկայի և կարգերի կատարելագործման նպատակով.

2) պարբերաբար կիրապարակվեն մամուլում ու կզետեղվեն կադաստրի պետական կոմիտեի ինտերնետային կայքում հասարակության լայն շերտերին կողմնորոշելու և հավաստի տվյալներ ունենալու համար.

3) վերլուծական նյութերը կտրամադրվեն պետական կառավարման մարմիններին՝ համապատասխան որոշումներ կայացնելու, կողմնորոշվելու և հավաստի տվյալներ ունենալու համար:

4. Ծրագրի նպատակն է՝

1) անշարժ գույքի միասնական գնահատման հայեցակարգի և մեթոդիկայի մշակումը.

2) անշարժ գույքի շուկայի մասնակիցներին տեղեկատվական աջակցության ցուցաբերումը, անշարժ գույքի շուկայի վիճակի, գնային իրավիճակի մասին օբյեկտիվ և վերլուծական տեղեկատվության տրամադրումը:

5. Ծրագրի խնդիրներն են՝

1) անշարժ գույքի շուկայում հողերի և դրանց վրա կառուցված շենքերի, շինությունների 2013-2014 թվականների վիճակի և գնի վրա էական ազդեցություն ունեցող գործոնների բացահայտումը.

2) անշարժ գույքի շուկայում հողերի և դրանց վրա կառուցված շենքերի, շինությունների 2013-2014 թվականների տարածագնահատման միասնական գոտիների բացահայտումը, սահմանագծերի նկարագրումն ու բնութագրումը, գոտիների անցման գործակիցների դուրսբերումը.

3) գյուղատնտեսական նշանակության հողերի 2014 թվականի գնային իրավիճակի բացահայտումը, բնութագրումը.

4) անշարժ գույքի շուկայի 2014 թվականի վիճակի, գնային իրավիճակի բացահայտումը, բնութագրումը:

## ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ
## ԱՇԽԱՏԱՆՔ N 1

### ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

6. Բնակավայրերի հողերի և դրանց վրա կառուցված շենքերի, շինությունների վիճակի և արժեքի համակարգված դիտարկումներն իրականացվելու են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 30-ի N 63 որոշմամբ սահմանված կարգով: Համակարգված դիտարկումներն իրականացվելու են 3 փուլով՝

1) ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ՝ հավաքագրվելու, խմբավորվելու և դասակարգվելու են բնակավայրերի նշանակության հողերի (բնակելի, հասարակական, խառը կառուցապատման և այլ հողերի) և դրանց վրա գտնվող շենքերի, շինությունների շուկայական արժեքների (գների) մասին 2013 թվականի տվյալներն ու տեղեկությունները:

Ստեղծվելու են վերլուծության համար անհրաժեշտ՝ 2014 թվականի էլեկտրոնային տվյալների բազա:

2) ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ՝ առաջին փուլում հավաքագրված և դասակարգված տվյալների, տեղեկությունների բազայի հիման վրա բնակավայրերի նշանակության հողերի և շենքերի, շինությունների՝

ա. 2014 թվականի գնային իրավիճակի վերլուծությունների իրականացում.

բ. միջին գների հաշվարկ.

գ. տարաբաժանման գնահատում և դուրս ընկնող արժեքների հեռացում.

դ. սխալմունքի գնահատում միջինների որոշման ժամանակ.

ե. ժամանակի տվյալ պահին տվյալների կապակցում:

Բնակավայրերի նշանակության հողերի և դրանց վրա գտնվող շենքերի, շինությունների համակարգված դիտարկումների երկրորդ փուլում իրականացվելու են՝

ա. անշարժ գույքի շուկայական գնագոյացման մոդելների միջոցով՝ շուկայական գնագոյացման գործոնների արժևորում, արժեքի վրա ազդող էական գործոնների առանձնացում.

բ. օբյեկտների (բնակավայրերի նշանակության հողերի և դրանց վրա գտնվող շենքերի, շինությունների) շուկայական գների խմբավորում (կլաստերացում), խմբերի բնութագրում գոտիների սահմանագծում, նկարագրում.

գ. համապատասխան գոտիների համեմատում, ընդհանրացում, նոր տարածագնահատման (տեղադրության և գտնվելու վայրի) միասնական գոտիների սահմանագծում, դրանց համարակալում( աճողական կարգով) և նկարագրում.

դ. անշարժ գույքի օբյեկտների տարածագնահատման (տեղադրության և գտնվելու վայրի) միասնական գոտիների հավասարաչափ անցման գործակիցների դուրսբերում՝ ըստ ստանդարտ գնային միջակայքերի (չափորոշիչների):

Վերլուծական տվյալները հիմք են հանդիսանալու երրորդ փուլում բնակավայրերի նշանակության հողերի և դրանց վրա գտնվող շենքերի, շինությունների միասնական գնահատման մեթոդիկայի մշակման համար:

3) ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ՝ մշակվելու են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակավայրերի հողերի և դրանց վրա գտնվող շենքերի, շինությունների տարածագնահատման գոտիները, դրանց միասնական բնութագրերը (Ստեփանակերտ քաղաքում), որոնք ամփոփվում են մի քանի գոտու մեջ, սահմանագծերի նկարագրումն ու արտապատկերումն իրականացվում են ՝ ըստ փողոցների և այլ կողմնորոշիչների, իսկ մյուս քաղաքային և գյուղական համայնքները, որոնք ամփոփվում են մեկ գոտու մեջ, նկարագրվում ու արտապատկերվում են ըստ շրջաններում ընդգրկված գոտիների ցանկի):

7. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 2000.0 հազար դրամ:

**ԱՇԽԱՏԱՆՔ N 2**

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ (ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ)**

8. Անշարժ գույքի շուկայի համակարգված դիտարկումներն են՝

1) անշարժ գույքի շուկայի վիճակի և գնային իրավիճակի 2014 թվականի համակարգված դիտարկումների իրականացումը՝ արդյունքներն ամփոփելով վերլուծությունների միջոցով, այդ թվում՝

ա. անշարժ գույքի շուկայի 2014 թվականի ակտիվության ուսումնասիրումը.

բ. անշարժ գույքի շուկայում 2014 թվականի գնային իրավիճակի ուսումնասիրումը.

գ. անշարժ գույքի շուկայում 2014 թվականի առաջարկի և պահանջարկի փոխհարաբերակցության ուսումնասիրումը.

դ. անշարժ գույքի օբյեկտների 2014 թվականի իրացվելիության և մատչելիության ուսումնասիրում.

2) անշարժ գույքի շուկայի 2014 թվականի 4-րդ եռամսյակի, 2-րդ կիսամյակի, տարեկան և 2014 թվականի եռամսյակային, կիսամյակային, 9 ամիսների կտրվածքով վիճակի և գնային իրավիճակի վերաբերյալ համառոտագրերի և վերլուծական ժողովածուների պատրաստումը.

3) գյուղատնտեսական հողատեսքերի գնային իրավիճակի 2014 թվականի համակարգված դիտարկումների իրականացումը.

4) շարունակվելու են անշարժ գույքի շուկայի վերլուծությունների համար հավաքագրված տեքստային տվյալների ու տեղեկությունների կապակցման աշխատանքները, որոնք պարունակելու են՝

ա. անշարժ գույքի օտարման (առուվաճառքի, նվիրատվության, փոխանակության), վարձակալության, գրավադրման (այդ թվում՝ հիփոթեքի) քանակական և որակական տվյալները.

բ. անշարժ գույքի մասնավորեցման, անհատույց սեփականաշնորհման, օրինականացման (ինքնակամ կառույցների նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման), առաջնային գրանցման (այդ թվում՝ նորակառույցների) և այլ պետական գրանցումների քանակական (միավոր) տվյալները.

5) անշարժ գույքի շուկայի վիճակը բնութագրող ընդհանրացված տեղեկատվություն՝

ա. անշարժ գույքի շուկայի ակտիվությունը՝ անշարժ գույքի հետ կապված գործարքների քանակը, կառուցվածքը և շարժընթացը՝ ըստ սեփականության սուբյեկտների: Ընդ որում, գործարքները վերլուծվում են եռամսյակային կտրվածքով, նախորդ և համադրելի եռամսյակների համեմատությամբ.

բ. շուկայի գնային իրավիճակը՝ շուկայական գների (նվազագույն, միջին, առավելագույն) մակարդակը, գների շարժընթացները, ինդեքսները՝ ըստ անշարժ գույքի տեսակների և տարածագնահատման գոտիների և շրջանների.

6) գյուղատնտեսական նշանակության հողամասերի առուվաճառքի գործարքների քանակական և որակական տվյալները:

9. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 1000.0 հազար դրամ:

**ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

10. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակավայրերի հողերի և դրանց վրա կառուցված շենքերի, շինությունների միասնական գնային իրավիճակի համակարգված դիտարկումների արդյունքում՝

1) կմշակվի անշարժ գույքի միասնական գնահատման մեթոդիկայի վերջնական տարբերակը՝ հաշվի առնելով 2013-2014 թվականների անշարժ գույքի շուկայում վիճակի և գնային իրավիճակի վերլուծման արդյունքները.

2) կբացահայտվեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակավայրերի հողերի և դրանց վրա կառուցված շենքերի, շինությունների միասնական տարածագնահատման գոտիները և դրանց անցման գործակիցները:

11. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսական հողատեսքերի գնային իրավիճակի համակարգված դիտարկումների արդյունքում՝

1) կբացահայտվեն գյուղատնտեսական հողատեսքերի գնահատման մեթոդիկայում ներառված բազիսային գների և գործոնների ճշգրտման համար անհրաժեշտ տվյալները.

2) կբացահայտվի ըստ քաղաքների և գյուղական համայնքների գյուղատնտեսական հողատեսքերի շուկայական միջին գների 2014 թվականի մակարդակը.

3) կբացահայտվեն անշարժ գույքի շուկայում 2014 թվականի գյուղատնտեսական հողատեսքերի վրա էական ազդեցություն ունեցող գործոնները և գնային իրավիճակի փոփոխությունները:

Որպես արդյունք ակնկալվում է գյուղատնտեսական հողատեսքերի գնահատման մեթոդիկայի կատարելագործման համար անհրաժեշտ տվյալների ստացումը՝ հաշվի առնելով 2013 թվականի անշարժ գույքի շուկայում էական ազդեցություն ունեցող գործոնները և գնային իրավիճակի փոփոխությունները: Կբացահայտվեն հողակադաստրային գնահատման շրջանների գնագոյացնող գործոնների, գնահատման խմբերի միջին բազիսային արժեքների հետ համընկնող և չհամընկնող արժեքները:

12. Անշարժ գույքի շուկայի 2014 թվականի վիճակի և գնային իրավիճակի համակարգված դիտարկումների իրականացման արդյունքում հնարավորություն կընձեռվի՝

1) շուկայական մեխանիզմների վրա հիմնված անշարժ գույքի միասնական գնահատման նոր մեթոդիկայի մշակման համար ստանալ ու վերլուծական և հավաստի տվյալներ.

2) անշարժ գույքի շուկայի մասնակիցներին, այդ թվում՝ պետական կառավարման մարմիններին՝ որոշումներ կայացնելիս օգտվել անշարժ գույքի շուկայի վերլուծական և հավաստի տվյալներից.

3) ապահովել տեղեկատվության անընդհատությունը՝ շարունակելու մամուլում, տեղեկագրերում անշարժ գույքի շուկայի վիճակի, այդ թվում՝ գնային իրավիճակի վերաբերյալ հոդվածների հրապարակումները, վերլուծական ժողովածուների ստեղծումը՝ 2013 թվականի 4-րդ եռամսյակի, 2-րդ կիսամյակի, տարեկան և 2014 թվականի եռամսյակային, կիսամյակային, 9 ամիսների կտրվածքով:

13. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 3000.0 հազար դրամ:

## ԳԼՈՒԽ IV

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԱՄՐԱՑՈՒՄ

| Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման | | | |
|---|---|---|---|
| բաժինը | խումբը | դասը | ծրագիրը |
| 01 | 06 | 01 | 07 |
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | |

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԱՄՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

### 1.ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին», «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշումների, սկսած 2004 թվականից, հանրապետությունում իրականացվել են վարչատարածքային միավորների (համայնքների) վարչական սահմանների ճշգրտման և նկարագրման աշխատանքներ: Իրավական փաստաթղթերի, նախկին հողօգտագործման իրավունքի պետական ակտերի, կադաստրային քարտեզների հիման վրա ճշգրտվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բոլոր գյուղական և քաղաքային համայնքների վարչական սահմանները և նկարագրվել 1:10000 մասշտաբի, իսկ Քաշաթաղի շրջանի համայնքները` 1: 25000 մասշտաբի տեղագրական քարտեզներով:

Նշված նկարագրություններն արդեն իսկ հաստատվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշումներով, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների և Ստեփանակերտ քաղաքի սահմանների 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզներով կատարված նկարագրությունները հաստատվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի կողմից: Համայնքների և շրջանների վարչական սահմանների իրավական ձևակերպումից հետո, գործող օրենսդրության համաձայն, անհրաժեշտ է դրանց հանգուցային և բնորոշ կետերը սահմանանիշերով ամրացնել տեղանքում և կապակցել պետական գեոդեզիական ցանցին:

### 2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի հիմնական նպատակն է շրջանների և համայնքների իրավական ձևակերպում ստացած վարչական սահմաններն ամրացնել բնության մեջ, ինչը թույլ կտա ունենալ պատշաճ ձևակերպված և տեղանքում ամրացված վարչական սահմաններ ու խուսափել սահմանային վեճերից:

## 3. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված վարչատարածքային միավորների սահմանագծերի նկարագրության նյութերի հիման վրա անհրաժեշտ է կատարել սահմանագծի հանգուցային և շրջադարձային կետերի ամրացման աշխատանքներ:

Սահմանանիշերի ամրացման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է կազմել տեխնիկական նախագիծ, որում պետք է արտահայտված լինեն սահմանների վրա հանգուցային և շրջադարձային կետերը, դրանց ամրացման տեսակները, դիտարկման եղանակները, կետերի կոորդինատների հաշվարկները, կատալոգների կազմման ու հանձնվող նյութերի ցանկը:

Պարտադիր պայման է հանդիսանում հանգուցային և շրջադարձային կետերի ուրվագծերը (կրոկները) համաձայնեցնել և պահպանության հանձնել սահմանակից համայնքների ղեկավարներին: Աշխատանքներն ավարտելուց հետո անհրաժեշտ է կազմել տեխնիկական հաշվետվություն և հանձնվող նյութերի ցանկ: Սահմանների ամրացման ընթացքում վարչական սահմանագծի նկարագրության մեջ, կետից-կետ որոշակի բացատրական անորոշությունների մեջ մտցնել հստակություն և նկարագրության ժամանակահատվածից մինչև ամրացման պահը եղած իրադրության (սիտուացիայի) փոփոխությունները մտցնել նկարագրությունն իրականացված քարտեզում: Աշխատանքներն ավարտելուց հետո յուրաքանչյուր շրջանի համայնքների համար կազմել նկարագրություն և ամրացման սխեմա ու ներկայացնել շրջանի վարչակազմի ղեկավարի համաձայնեցմանը:

Վարչակազմի ղեկավարի հետ համաձայնեցված սխեման Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը:

Ըստ նախահաշվի նախատեսվում է յուրաքանչյուր համայնքում ամրացնել մոտ 4 հանգուցային և 23 շրջադարձային կետեր:

Համայնքների վարչական տարածքների սահմանագծի սահմանանիշերի ամրացման աշխատանքները նախատեսվում են իրականացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2004 թվականի ապրիլի 2-ի թիվ 17-Կ հրամանով հաստատված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչատարածքային միավորների սահմանագծերի նկարագրման և սահմանների ամրացման հրահանգի պահանջներին համապատասխան:

## 4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջների կատարում, որի նպատակն է սահմանակից համայնքների միջև սահմանային հարցերի կարգավորման իրավական հիմքերի ստեղծումը: Ծրագրի իրականացման արդյունքում կհստակեցվեն շրջանների և համայնքների սահմանները, և կլուծվեն համայնքների և շրջանների միջև սահմանային վեճերը, կճշգրտվեն համայնքների հողային հաշվեկշիռները:

Աշխատանքների իրականացումը հնարավորություն կընձեռի տարիներով կուտակված հողային և սահմանային վեճերը կարգավորել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

վարչատարածքային բաժանման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան ստեղծված նոր վարչատարածքային միավորների վարչական սահմանների անցկացման, իսկ սահմանագծերի հանգուցային և շրջադարձային կետերի կոորդինատավորումը՝ ցանկացած միջհամայնքային հողային վեճերի լուծման, ինչպես նաև հողային հաշվեկշիռների կազմման համար:

## 5. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

2014 թվականի ծրագրով նախատեսվում է 13 400.0 հազար դրամի չափով աշխատանքներ իրականացնել Քաշաթաղի և Շահումյանի շրջանների 18 համայնքների և 7 շրջանների սահմանների ամրացման աշխատանքների համար:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման միջոցառումներն ու ֆինանսավորման հաշվարկները տրված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների և համայնքների վարչական սահմանների ամրացման աշխատանքների հաշվարկում (Աղյուսակ 1):

### ՀԱՇՎԱՐԿ

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 7 ՇՐՋԱՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՇԱԹԱՂԻ ԵՎ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ 18 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԱՄՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

***Աղյուսակ 1***

| Հ/Հ | Աշխատանքների անվանումը | Չափման միավորը | Քանակը | Միավորի արժեքը (դրամ) | Գումարը, ընդամենը (հազար դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1. | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 7 շրջանների, Քաշաթաղի և Շահումյանի շրջանների 18 համայնքների տեխնիկական նախագծի կազմում և համաձայնեցում անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ | նախագիծ | 1 | 220000 | 220.0 |
| 2. | Համայնքների վարչական սահմանների փոխադրումը բնության մեջ (դաշտային դիտարկումներ, շրջադարձային և հանգուցային կետերի նշահարում, արտաքին ձևավորում, ուրվագծերի կազմում, դաշտային դիտարկումներ) | սահմա-նանիշ | | | |
| | 1) Հանգուցային, որից | | | | |
| | ա. կետերի նշահարում | | 100 | 5500 | 550.0 |
| | բ. արտաքին ձևավորում և ուրվագծերի կազմում | | 100 | 1960 | 196.0 |
| | գ. դաշտային դիտարկումներ | | 100 | 3500 | 350.0 |
| | 2) Շրջադարձային, որից | սահմա-նանիշ | | | |
| | ա. կետերի նշահարում | | 555 | 5500 | 3052.5 |
| | բ. արտաքին ձևավորում և ուրվագծերի կազմում | | 555 | 1960 | 1087.8 |
| | գ. դաշտային դիտարկումներ | | 555 | 3500 | 1942.5 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3. | Սահմանանիշերի դաշտային դիտարկումների արդյունքների հավասարակշռում, կոորդինատների հաշվարկում, կատալոգի կազմում | սահմա-նանիշ | | | |
| | ա. հանգուցային | | 100 | 1130 | 113.0 |
| | բ. շրջադարձային | | 555 | 1130 | 627.2 |
| 4 | Կադաստրային, տեղագրական և համայնքների վարչական սահմանների նկարագրման քարտեզների համադրում և դրա արդյունքում առաջացած անճշտությունների ուղղում գրասենյակային և դաշտային պայմաններում | 18 համայնք և 7 շրջան | 25 | 98760 | 2469.0 |
| 5 | Սահմանանիշերի հանձնման և ընդունման ակտերի կազմումը տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին հանձնումը | 18 համայնք և 7 շրջան | 25 | 10000 | 250.0 |
| 6 | Տեխնիկական հաշվետվության կազմում | հաշվետվություն | 1 | 312000 | 312.0 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **11170.0** |
| | **ԱԱՀ 20%** | | | | **2230.0** |
| | **ԸՆԴՀԱՆՈՒՐԸ** | | | | **13400.0** |

## ԳԼՈՒԽ V

## ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ

| Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման | | | |
|---|---|---|---|
| բաժինը | խումբը | դասը | ծրագիրը |
| 01 | 06 | 01 | 08 |
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | |

## ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

| Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման | | | |
|---|---|---|---|
| բաժինը | խումբը | դասը | ծրագիրը |
| 01 | 06 | 01 | 10 |
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերի չպատկանող) | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերի չպատկանող) | |

## ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ,

## ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ

1. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը կատարվում է պետության կողմից գույքի նկատմամբ գրանցված իրավունքների պաշտպանության, կադաստրային տվյալների մատչելիության, օբյեկտիվության, անընդհատության և կենտրոնացման սկզբունքների հիման վրա:

2. Առաջնորդվելով պետական գրանցման այս հիմնական սկզբունքներով՝ իրավունքների պետական գրանցման ընթացքում կադաստրի համակարգը նպատակ ունի լուծել օրենսդրությամբ առաջադրված կարևոր խնդիրներ, դրանք են.

1) իրականացնել շուրջ 9100 միավոր անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում, որից 9000 միավոր՝ ընթացիկ գործունեության արդյունքում, իսկ 100 միավոր՝ իրավունքների առաջին պետական գրանցման գործընթացի շրջանակներում.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հայտերի հիման վրա կատարել շուրջ 400 միավոր գույքի, այդ թվում համայնքների վարչական սահմաններում կամ դրանցից դուրս գտնվող պետական կամ համայնքային սեփականության հողերի վրա կառուցված ինքնակամ կառույցների նկատմամբ համայնքների կամ պետության սեփականության իրավունքի պետական գրանցում.

3) գույքի և դրա նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվական համակարգի ստեղծում:

3. Պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ճանաչումը ենթադրում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության պահանջների ճշգրիտ և անշեղ կատարմամբ ապահովել գույքի նկատմամբ դեռևս չգրանցված իրավունքների պետական գրանցում և այս իմաստով գրանցված իրավունքների երաշխավորման խնդրով է թելադրված իրավունքների պետական գրանցման, այսինքն՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական ճանաչման ընթացքում օրենսդրության պահանջների ճշգրիտ և անշեղ կատարումը, առանց որի անհնար է երաշխավորել գույքի նկատմամբ գրանցված իրավունքները:

4. Այս տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունի նաև կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման գործընթացի արդյունավետ ավարտումը և նոր գրանցման համակարգի անցումը, որի ընթացքում կճշտվեն դրանց նկատմամբ իրավունքներն ու սահմանափակումները և յուրաքանչյուր սեփականատիրոջ անվճար կտրամադրվեն անշարժ գույքի սեփականության, օգտագործման իրավունքի գրանցման վկայականներ:

### 2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

5. 2014 թվականի ընթացքում ընդհանուր առմամբ կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների կողմից կգրանցվի մոտավորապես 9100 միավոր գույքի նկատմամբ իրավունք, որից 9000 միավոր՝ ընթացիկ գործունեության արդյունքում, իսկ 100 միավոր՝ իրավունքների առաջին պետական գրանցման գործընթացի շրջանակներում:

6. Համակարգի առջև դրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է շարունակել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքները, այդ թվում՝

1) հաշվառել սեփականության իրավունքով տնօրինվող անշարժ գույքը, այդ թվում՝ հողամասերը, շենքերը, շինությունները (անկախ սեփականության իրավունքի սուբյեկտներից)՝ ճշգրտելով դրանց օգտագործողներին, և հիմքեր ստեղծել հետագայում իրավունքների պետական գրանցման համար.

2) ճշտել օրենսդրության խախտումներով և անօրինական հատկացված, ինքնակամ զբաղեցված ու օգտագործվող հողամասերը՝ հետագայում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով խոչընդոտները վերացնելու և դրանք իրավական դաշտ բերելու նպատակով:

7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության պահանջների ճշգրիտ կատարումն ապահովելու և մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով կոմիտեի աշխատակազմի գրանցման բաժնի աշխատակիցները պարբերաբար կգործուղվեն կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումներ:

8. Գույքի և դրա նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվական համակարգի ներդրման, գույքի և դրա նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ տվյալների մատչելիության, օբյեկտիվության և անընդհատության ապահովման խնդիրների արդյունավետ լուծման նպատակով անհրաժեշտ է՝

1) կանոնակարգել պետական կառավարման մարմինների և իրավունքի սուբյեկտների միջև տեղեկատվության փոխանակման գործընթացը.

2) ձեռնարկել միջոցառումներ՝ ապահովելու տեղեկատվական բանկի, ավտոմատացված կադաստրի ներդրման աշխատանքների արդյունավետությունը:

## 3 ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

9. 2014 թվականի ընթացքում կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում իրականացվելու են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքներ, որոնք իրենց մեջ կներառեն՝

1) իրավահաստատող փաստաթղթերի ապահովում.

2) ըստ միավորների և սեփականատերերի արխիվային գործերի կազմում.

3) պետական գրանցման միասնական մատյանների լրացում.

4) սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականների կազմում և դրանց հանձնում սեփականատերերին.

5) կադաստրային տվյալների մասին տեղեկատվության մատչելիության, անընդհատության և օբյեկտիվության ապահովում.

6) տեղեկատվական բանկի, ավտոմատացված կադաստրի ներդրման աշխատանքների արդյունավետության ապահովում, որի

արդյունքում կլուծվեն շատ խնդիրներ իրավունքների պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման բնագավառում:

10. 2014 թվականի գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կլինի 100.0 հազար դրամ:

11. 2014 թվականի պետական և համայնքային սեփականություն համարվող շենքերի, շինությունների և հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման և պետական հիմնարկներին տեղեկատվության տրամադրման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ կլինի 10 000.0 հազար դրամ:

## ԳԼՈՒԽ VI

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՆՈՒՄ, ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՍՏԵՂԾՈՒՄ

| Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման | | | |
|---|---|---|---|
| բաժինը | խումբը | դասը | ծրագիրը |
| 01 | 06 | 01 | 09 |
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | |

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՍՏԵՂԾՄԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական ավտոմատացված համակարգի և տեղեկատվական բանկի ստեղծման ծրագիրը մշակվել է` ելնելով «Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 31-րդ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 33-րդ և «Գեոդեզիայի ու քարտեզագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածների պահանջներից: Ծրագրի իրականացման հիմնական նպատակը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ավտոմատացված համակարգի ներդրումն է:

### 1.ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հողային կադաստրի ստեղծման և ավտոմատացման Հայաստանի Հանրապետության փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ հողային կադաստրի տվյալների լրիվության, հավաստիության ապահովումը, հողակադաստրային տվյալների ստացման և փաստաթղթերի ձևակերպման գործընթացների արագացումը հնարավոր է միայն անշարժ գույքի միասնական տեղեկատվական բանկի ստեղծման միջոցով, որը պարունակում է անշարժ գույքի վերաբերյալ ամբողջ (հաշվառման, գրանցման և գնահատման) տեղեկատվությունը:

Անշարժ գույքի կադաստրային գործերի տեղեկատվական բանկի էլեկտրոնային արխիվների ստեղծման աշխատանքներն ընթանում

են պետական կոմիտեի աշխատակազմի բոլոր տարածքային ստորաբաժանումներում:

## ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԽԻՎՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Ներկայումս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների գործունեության ընթացքում ստեղծվել է ավելի քան 110952 թղթապանակ` անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվությամբ, որոնք պահպանվում են համակարգի 8 տարածքային ստորաբաժանումների արխիվներում: Բացի դրանից, տեղեկատվությունն ավելանում է նաև անշարժ գույքի նկատմամբ կատարվող գործարքներից ամսական միջին հաշվով 350 գործարք:

2006 թվականից սկսված են անշարժ գույքի կադաստրային գործերի էլեկտրոնային արխիվների ստեղծման աշխատանքները: Վերապատրաստվել են ութ աշխատողներ, որոնցից հինգը` տարածքային ստորաբաժանումներում, երեքը` Տեղեկատվական կենտրոն ստորաբաժանումում աշխատելու համար: Մուտքագրվել են 110952 կադաստրային գործի (կադաստրային գործի ծածկագիր, անշարժ գույքի կադաստրային ծածկագիր, անշարժ գույքի հասցե, սեփականատիրոջ (օգտագործողի) անուն, ազգանուն, վկայականի համար) տվյալներ, ծածկագրվել և մուտքագրվել են 4366317 էջի (փաստաթղթի տիպ, հերթական համար, ֆորմատ) տվյալներ, տեսաներածվել է 2404890 կադաստրային էջ, փաստաթուղթ (110952 կադաստրային գործ): Շարունակվում են թվային (կադաստրային) քարտեզների ստեղծման հետագա աշխատանքները, ընթացքում են էլեկտրոնային արխիվի և տեղեկատվական բանկի ստեղծման, «ACCESS» ավտոմատացված համակարգի նոր տարբերակի շահագործման աշխատանքները:

2006-2013 թվականներին կադաստրային գործերի էլեկտրոնային արխիվների ստեղծման ուղղությամբ կատարված աշխատանքները բերված են աղյուսակ 1-ում:

*Աղյուսակ 1*

| Տարի | Մուտքագրված կ.գ. | Մուտքագրված կ.գ.էջեր | Տեսաներածված կ.գ.էջեր | Տեսաներածված կ.գ. |
|---|---|---|---|---|
| 2006 թ. | 1980 | 88120 | 46528 | 1980 |
| 2007թ | 22399 | 458168 | 300280 | 22399 |
| 2008 թ. | 27671 | 756436 | 321052 | 27671 |
| 2009թ. | 24920 | 671752 | 318505 | 24920 |
| 2010թ. | 14000 | 590943 | 328523 | 14000 |
| 2011թ. | 9700 | 876367 | 588286 | 9700 |
| 2012թ. | 4804 | 446769 | 229324 | 4804 |
| 2013թ. | 5478 | 477762 | 272392 | 5478 |
| **Ընդամենը** | **110952** | **4366317** | **2404890** | **110952** |

## ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԶԻՆՈՒՄԸ

2014 թվականի դրությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի կողմից ձեռք բերված առկա տեխնիկական սարքավորումների ցանկը բերված է աղյուսակ 2-ում:

*Աղյուսակ 2*

| Սարքավորման անվանումը | Քանակը | Ընդամենը |
|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| Համակարգիչ | Notebook | Համակարգիչ | | 88 |
| | 8 | 80 | | |
| Տպիչ | A0 ֆորմատ | A4 ֆորմատ | A3 ֆորմատ | 31 |
| | 1 | 28 | 2 | |
| Տեսաներածիչ | A0 ֆորմատ | A4 ֆորմատ | A3 ֆորմատ | 22 |
| | 1 | 21 | 0 | |
| Ցանցային կուտակիչ | 10 ՄԲիտ/Վ | 10/100 ՄԲիտ/Վ | 1 ՄԲիտ/Վ | 12 |
| | 0 | 12 | 0 | |
| Պատճենահանող սարք | 1 | 6 | 8 | 15 |
| Անխափան սնուցման սարք | 72 | | | 72 |

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Անշարժ գույքի կադաստրի տեղեկատվական բանկի ստեղծման նպատակով կատարվել են 165 համայնքների թվային կադաստրային քարտեզների ստեղծման աշխատանքները: Այդ համայնքների էլեկտրոնային (կադաստրային) քարտեզագրման և 2014 թվականին նախատեսված աշխատանքների արդյունքներով կադաստրային գործերի քանակը կլինի ավելի քան 112000:

Կարևոր խնդիր է հանդիսանում տեղեկության պահպանումը, պահուստային պատճենահանումը: Միջին հաշվով մեկ կադաստրային գործն զբաղեցնում է 5,0 ՄգԲ համակարգչային հիշողություն: Միայն տվյալների պահպանման համար անհրաժեշտ են հզոր ցանցային կուտակիչներ ավելի քան 500 ԳգԲS դիսկային տարածությամբ:

Անշարժ գույքի կադաստրի նպատակաուղղված աշխատանքների իրականացման ապահովման համար անհրաժեշտ է կազմակերպել մասնագետների վերապատրաստման նպատակային դասընթացներ հետևյալ ուղղություններով.

1) Windows 7 օպերացիոն համակարգեր
2) Office 2007 (MS Word, Excel, Access)
3) «ACCESS» կառավարման ավտոմատացված համակարգ (սեփականատերերի գրանցում, էլեկտրոնային արխիվի ստեղծում և վարում, պահուստային պատճենահանում, վերականգնում):

## 2. ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն ծրագիրը նախատեսված է անշարժ գույքի կադաստրի վարման արդյունավետությունը բարձրացնելու համար, այդ թվում`

1) անշարժ գույքի կադաստրի պետական միասնական տեղեկատվական բանկի ստեղծում և վարում,
2) անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման ժամանակի էական կրճատում.
3) անշարժ գույքի ու դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության (ինչպես տարածական, այնպես էլ իրավական) տրամադրման ժամանակի զգալի կրճատում.
4) ամբողջ հասարակության անշարժ գույքի տեղեկատվական բանկի մատչելիության ապահովում.
5) անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվության հավաստիության բարձրացում, տվյալների փոփոխման և թարմացման անընդհատության ապահովում.

6) անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվության անհարկի կրկնության բացառում.

7) տեղեկատվական աջակցություն՝

ա. պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ճանաչմանը, երաշխավորմանը և պաշտպանությանը.

բ. հողի հարկի և գույքահարկի բազաների ստեղծմանը.

գ. անշարժ գույքի շուկայի կայացմանը:

## 3. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների ցանկը բերված է աղյուսակ 3-ում:

*Աղյուսակ 3*

| Հ/Հ | Միջոցառումներ |
|---|---|
| 1 | Սերվերի ձեռքբերում |
| 2 | Պլոտերի ձեռքբերում |
| 3 | Տարածքային ստորաբաժանումներում կադաստրային գործերի տվյալների մուտքագրում և էջերի տեսաներածում |
| 4 | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գերատեսչական ցանցի սպասարկում և արդիականացում |
| 5 | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի տեղեկատվական բանկի ծրագրի ներդրման նպատակով անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում |
| 6 | Ընդհանուր օգտագործման ծրագրային փաթեթների (գործող համակարգերի, տվյալների շտեմարանի ղեկավարման համակարգի, հակավիրուսային փաթեթների, տեղեկատվական բանկի անվտանգության ապահովման և այլն) ձեռքբերում և արդիականացում |
| 7 | Ինտերնետ կապի մուտքի և ելքի ապահովում |

## 4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացումից սպասվող հիմնական արդյունքներն են՝

1) կադաստրային գործերի էլեկտրոնային արխիվացում.

2) անշարժ գույքի տվյալների, իրավահաստատող փաստաթղթերի, սեփականատերերի (օգտագործողների) տվյալների տեղեկատվական բանկ.

3) 3 վերապատրաստված աշխատակիցներ.

4) անշարժ գույքի պետական միասնական տեղեկատվական բանկի ստեղծումը.

5) անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման ժամանակի էական կրճատումը.

6) անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության (ինչպես տարածական, այնպես էլ իրավական) տրամադրման ժամանակի զգալի կրճատումը.

7) ամբողջ հասարակության համար անշարժ գույքի տեղեկատվական բանկի մատչելիության ապահովումը.

8) անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվության հավաստիության բարձրացումը, տվյալների փոփոխման և թարմացման անընդհատության ապահովումը.

9) անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվության անհարկի կրկնության բացառումը:

## 5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Վերը նշված համակարգերի նախագծման, մշակման, ներդրման, շահագործման և սպասարկման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների նախահաշիվը բերված է աղյուսակ 4-ում:

## 6. ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՑԱՆՑ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ

Առկա գերատեսչական հաշվողական ցանցն այսօրվա դրությամբ ապահովում է պետական կոմիտեի տեղեկատվության շրջանառությունը աշխատակազմի Տեղեկատվական կենտրոնի և Ասկերանի, Մարտունու, Հադրութի, Շուշիի, Մարտակերտի ու Քաշաթաղի տարածքային ստորաբաժանումների հետ:

2012 թվականին կայացել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նոր պաշտոնական կայքի բացումը, որի նպատակն է հասարակության լայն շերտերին ծանոթացնել կադաստրի համակարգի կողմից իրականացվող գործառույթներին և իրավական ակտերին :

Վերը նշված միջոցառումները թույլ են տալիս ակտիվացնել աշխատանքներն անշարժ գույքի հետ:

### 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

*Աղյուսակ 4*

| Հ/Հ | Ծախսերի անվանումը | Չափի միավորը | Ընդամենը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| | Անշարժ գույքի կադաստրի վարման ավտոմատացված համակարգի ներդրում, զարգացում և տեղեկատվական բանկի ստեղծում | | |
| 1. | Ինտերնետ ցանցի մուտքի ապահովում | X | 500.0 |
| 2. | Ծրագրի ներդրման նպատակով անհրաժեշտ սարքավորումների ձեռք բերում | | 3500.0 |
| 3. | Ընդհանուր օգտագործման ծրագրային փաթեթների (հակավիրուսային փաթեթների, տեղեկատվական բանկի անվտանգության ապահովման և այլն) ձեռք բերում և արդիականացում | փաթեթ | 900.0 |
| 4. | Կայքի պահպանում և արդիականացում | | 100.0 |
| | Ընդամենը | | **5000.0** |

## ԳԼՈՒԽ VII

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳԾՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱԽՍԵՐ

| Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման | | | |
|---|---|---|---|
| բաժինը | խումբը | դասը | ծրագիրը |
| 01 | 06 | 01 | 11 |
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին | |

| | | | |
|---|---|---|---|
| | չպատկանող) | չպատկանող) | |

## 1. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Համաձայն «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի համակարգի տարեկան ծախսերը պլանավորվում, իրականացվում են սպասվելիք տարեկան եկամուտների չափով և հաստատվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի առանձին հավելվածով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2014 թվականի տարեկան ծախսերը պլանավորվում են 225100.0 հազար դրամի չափով, որից 215 000.0 հազար դրամը նախատեսվում է իրականացնել կոմիտեի աշխատակազմի ստորաբաժանումների ընթացիկ գործունեության արդյունքներով 2014 թվականի ընթացքում պետական գրանցման, գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ծառայության դիմաց գանձվելիք վճարների հաշվին: Ստացված եկամուտների հաշվին կիրականացվեն հետևյալ ուղղություններով նախատեսված ծախսերը (Աղյուսակ 1).

1) «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով նախատեսված է 151128.2 հազար դրամի չափով ծախս: Այն հաշվարկվել է «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի համաձայն:

2) «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով նախատեսվում է 30 329.0 հազար դրամի չափով ծախս:

3) «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով նախատեսվում է կատարել 6291.2 հազար դրամի չափով ծախս:

4) «Կոմունալ ծառայություններ» հոդվածով նախատեսվում է կատարել 218.8 հազար դրամի չափով ծախս: Համակարգի ութ ստորաբաժանումների կողմից օգտագործվող ջրմուղ-կոյուղուց օգտվելու վարձը մեկ տարվա համար կկազմի 136.9 հազար դրամ, աղբահանության ծախսերը՝ 81.9 հազար դրամ:

5) «Կապի ծառայություններ» հոդվածով նախատեսվում է կատարել 1972.8 հազար դրամի չափով ծախս: Համակարգի ութ ստորաբաժանումներում կապի ծառայություններից օգտվելու համար 2014 թվականին պլանավորվում է իրականացնել 1972.8 հազար դրամի ծախս:

6) «Ներքին գործուղումներ» հոդվածով նախատեսված է 3100.0 հազար դրամի չափով ծախս: Պլանավորվում են գործուղումներ հանրապետության ներսում և Հայաստանի Հանրապետություն: Հաշվարկները կատարվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային աշխատողների գործուղումների համար սահմանված նորմաների հիման վրա:

7) «Տեղեկատվական ծառայություններ» հոդվածով նախատեսվում է իրականացնել 2500.0 հազար դրամի չափով տպագրական և թերթերի բաժանորդագրության ծախսեր:

8) «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածով նախատեսվում է իրականացնել 6825.0 հազար դրամի չափով ծախս:

9) «Գրասենյակային նյութեր և հագուստ» հոդվածով նախատեսվում է կատարել 2690.0 հազար դրամի չափով ծախս:

10) «Տրանսպորտային նյութեր» հոդվածով նախատեսվում է կատարել 8170.0 հազար դրամի չափով ծախս:

11) «Հատուկ նպատակային այլ նյութեր» հոդվածով նախատեսվում է իրականացնել 1375.0 հազար դրամի չափով ծախս՝ Տեղեկատվական կենտրոնի կողմից ծրագրային աշխատանքների կատարումն ապահովելու նպատակով:

12) «Հանրային սննդի և կենցաղային ապրանքներ» հոդվածով նախատեսվում է տարածքային ստորաբաժանումներում իրականացնել 400.0 հազար դրամի չափով ծախս:

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳԾՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱԽՍԵՐ

*Աղյուսակ 1*

| **Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները** | **Ընդհանուր գումարը (հազար դրամ)** |
|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝ | 215 000.0 |
| Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝ | 215 000.0 |
| Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 151 128.2 |
| Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ | 30 329.0 |
| Էներգետիկ ծառայություններ | 6 291.2 |
| Կոմունալ ծառայություններ | 218.8 |
| Կապի ծառայություններ | 1972.8 |
| Ներքին գործուղումներ | 3 100.0 |
| Տեղեկատվական ծառայություններ | 2 500.0 |
| Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 6 825.0 |
| Գրասենյակային նյութեր և հագուստ | 2 690.0 |
| Տրանսպորտային նյութեր | 8 170.0 |
| Հատուկ նպատակային այլ նյութեր | 1375.0 |
| Հանրային սննդի և կենցաղային ապրանքներ | 400.0. |

## ԳԼՈՒԽ VIII

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ

| Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման | | | |
|---|---|---|---|
| բաժինը | խումբը | դասը | ծրագիրը |
| 01 | 06 | 01 | 12 |
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | |

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

## 1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում բազային աշխարհատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքներ մինչև օրս չեն իրականացվել: Իրականացվել իք աշխատանքների հիմնական նպատակն աշխարհագրական անվանումների, հողային ֆոնդի, անշարժ գույքի նպատակային, գործառնական նշանակության, հողատեսքերի, ջրագրության, ռելիեֆի, գծային ենթակառուցվածքների օբյեկտների մասին քարտեզագրական և տեքստային տվյալների տեղեկատվական բանկի ստեղծումն ու կառավարումն է:

## 2. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի հիմնական նպատակը հանրապետությունում ժամանակակից պահանջներին բավարարող բազային աշխարհատեղեկատվական համակարգի ստեղծումն է, որն անհրաժեշտ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին տնտեսության տարբեր ոլորտների խնդիրների արդյունավետ լուծման, հանրապետության բնական եւ տնտեսական ռեսուրսների վերաբերյալ տվյալների (ինչպես քարտեզագրական, այնպես էլ տեքստային) պետական միասնական տեղեկատվական բանկի ստեղծման և հանրապետության ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման համար:

Հանրապետության բնական և տնտեսական ռեսուրսների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է ունենալ հավաստի և ամբողջական տեղեկատվություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և նրա առանձին վարչատարածքային միավորների տնտեսության վիճակի ու բնական ռեսուրսների վերաբերյալ, այդ թվում հողային, ջրային, անտառային ռեսուրսների, օգտակար հանածոների, տնտեսական զարգացման, արդյունաբերական եւ գյուղատնտեսական ձեռնարկությունների, անշարժ գույքի, բնակչության տեղաբաշխման, ճանապարհային ցանցի ու ենթակառուցվածքների այլ տարրերի,էկոլոգիական վիճակի մասին:

## 3. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Բազային աշխարհատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքները ժամանակակից տեխնոլոգիական պահանջներին համապատասխան ստեղծելու և ներդնելու նպատակով նախատեսվում է 2014-2015 թվականներին բազային աշխարհատեղեկատվական համակարգի ստեղծման համար իրականացնել հետևյալ միջոցառումները`

1) նշված տարածքների համար 1:1000 մասշտաբի տեղագրական թվային արդիական իրավիճակով և ռելիեֆով հատակագծերի ստեղծում.

2) ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիների հանութագրում և համաձայնեցում շահագործող կազմակերպությունների հետ.

3) բազային աշխարհատեղեկատվական համակարգի համար անհրաժեշտ շերտերի և տեքստային տվյալների ստեղծում և մուտքագրում տվյալների բազա:

## 4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք ստեղծված բազային ԱՏՀ տեղեկատվական բանկ, որը հիմք կհանդիսանա գերատեսչական տարբեր ոլորտների, այդ թվում քաղաքաշինական, բնապահպանական, արդյունաբերական, անշարժ գույքի կադաստրի, տարածքների պլանավորման, գյուղատնտեսական հողերի հաշվառման, հողերի միավորման, հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաների կազմման, գույքահարկի և գնահատման բազաների ճշգրտման, վարչական և տնտեսական գործունեության, մելիորացիայի, երկրաբանական հետախուզական աշխատանքների, անտառտնտեսության, արտակարգ իրավիճակների ժամանակ օպտիմալ և օպերատիվ որոշումների կայացման, հանրապետության շրջանների, համայնքների և առանձին տարածքների զարգացման, օպտիմալ պլանավորման և այլ ոլորտների խնդիրների լուծման համար:

## 5. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագրի ֆինանսավորման համար անհրաժեշտ կլինի 5000.0 հազ. դրամ:

# ԳԼՈՒԽ IX
# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ

| Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման | | | |
|---|---|---|---|
| բաժինը | խումբը | դասը | ծրագիրը |
| 01 | 06 | 01 | 13 |
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | |

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

## 1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքների հողերի հաշվառման և հողային հաշվետվությունների կազմման աշխատանքներն իրականացվել են օգտագործելով՝ 1972-1976 թվականներին կազմված հողաշինարարական քարտեզները և սխեմաները, ինչպես նաև համայնքների քարտեզագրման նյութերը:

Նախորդ տարիների համայնքների հանութագրման ժամանակ քարտեզագրվել են անշարժ գույքի միայն սեփականաշնորհված միավորները, չեն քարտեզագրվել պետական պահուստային ֆոնդը, արոտավայրերը, խոտհարքերը և այլն, իսկ 1972-1976 թվականներին քարտեզագրական նյութերի կազմումից անցել է մոտ 3 տասնամյակ և քարտեզները կարիք ունեն նորացման և թարմացման, որը չի կատարվել և փոփոխված կոնտուրները և նրանց դինամիկան քարտեզագրական նյութում չի արտացոլվել, ինչպես նաև 2000-2003 թվականներին, 2004-2008 թվականներին ներառյալ առանց հանութային հիմքի կատարված համայնքների, կադաստրային

քարտեզագրման և համայնքների բնակավայրերի 1:2000 մասշտաբի տեղագրական հանութագրման աշխատանքները, ինչը հանգեցրել է հողերի հաշվառման և հաշվետվությունների կազմման ժամանակ անճշտությունների:

## 2.ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Հողային ֆոնդի հաշվառումը իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան` Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 27-ի N 172 որոշմամբ հաստատված կարգով, կադաստրային քարտեզների ճշգրտման, վարչատարածքային սահմանների ամրացման աշխատանքների արդյունքում առաջացած նյութերի հիման վրա:

Հողերի հաշվառումը հանդիսանում է կարևոր պետական միջոցառում, որի նպատակն է ճշտել ըստ համայնքների և շրջանների վարչական տարածքների և համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող հատվածների հողերի փաստացի առկայությունը` ըստ սեփականության ձևերի, նպատակային և գործառնական նշանակության ու հողատեսքերի, որի տվյալները կնպաստեն անշարժ գույքի հարկման բազայի ճշգրտմանը, հողային հարաբերությունների կարգավորմանը, հողատարածությունների արդյունավետ օգտագործմանը:

Հողային հաշվեկշիռը հողերի ընթացիկ հաշվառման հիման վրա կազմվող յուրաքանչյուր տարվա հողային ֆոնդի առկայության և բաշխման մասին հաշվետվություն է:

Յուրաքանչյուր տարվա հողային հաշվեկշռում ընդգրկվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացված հողերի գույքագրման տվյալները, ինչպես նաև կադաստրային քարտեզագրումն ավարտված համայնքներում կադաստրային քարտեզագրման տվյալները:

## 3.ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Աշխատանքները նախատեսվում է իրականացնել 3 փուլով`

1) նախապատրաստական աշխատանքներ.

2) դաշտային-հետազոտական, կոռեկտոր-արտանկարման աշխատանքներ.

3) կամերալ-հաշվարկային աշխատանքներ:

Նախապատրաստական աշխատանքների ընթացքում հավաքագրվում են անհրաժեշտ գրաֆիկական և տեղեկատվական նյութեր, ուսումնասիրվում դրանք, անհրաժեշտության դեպքում դրանց հավաստիության վերաբերյալ պարզաբանումներ է ձեռք բերվում համապատասխան մարմիններից:

Դաշտային-հետազոտական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել ներքոհիշյալ աշխատանքները.

1) հողի նպատակային նշանակության ճշտում.

2) հողի սեփականության սուբյեկտի ճշտում.

3) հողի գործառնական նշանակության ճշտում.

4) հողատեսքերի ճշտում.

5) հողերի շարժի, փոխակերպման (տրանսֆորմացիայի) տվյալների ճշտում.

6) օրենսդրությամբ սահմանված կարգով պետական, համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օտարման տվյալների ճշտում.

7) նոր անտառատնկումների և անտառահատումների տվյալների ճշտում.

8) նոր հողերի իրացման, բարելավման, բազմամյա տնկարկների հիմնման և քանդման տվյալների ճշտում:

Կամերալ-հաշվարկային աշխատանքների ընթացքում հաշվարկվում են երկրորդ փուլի ընթացքում ճշտված տվյալները՝ հողերն՝ ըստ նպատակային և գործառնական նշանակության, սեփականության սուբյեկտների, իսկ գյուղատնտեսական և անտառային նշանակության հողերն՝ ըստ հողատեսքերի գրանցվում են «Հողային ֆոնդի առկայության և բաշխման մասին» հաշվետվության օժանդակ ձևերում, ամփոփվում են և արդյունքում ստացված գումարային տվյալները գրանցվում են «Հողային ֆոնդի առկայության և բաշխման մասին» հաշվետվության ամփոփ ձևում: Լրացվում են նաև հողերի փոխակերպման (տրանսֆորմացիայի) մասին տեղեկանքները:

Հողերի հաշվառման արդյունքում կազմվում և ամփոփվում է հողային հաշվեկշիռը և այն սահմանված կարգով համաձայնեցվում է համայնքի ղեկավարի ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանման հետ:

Հողային հաշվեկշիռը կազմվում է երկու օրինակից: Դրանցից մեկը հանձնվում է համայնքի ղեկավարին՝ հողերի ընթացիկ հաշվառումն իրականացնելու համար, իսկ մյուսը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

## 4.ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

2014 թվականին ծրագրի իրականացման համար անհրաժեշտ գումարը կազմում է 2 400.0 հազար դրամ:

| Հ/Հ | Աշխատանքի անվանումը | Չափման միավորը | Ծավալը | Միավորի արժեքը (դրամ) | Ընդամենը գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1. | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի հաշվառում և հողային հաշվետվությունների կազմում | Համայնք | 10 | 240000 | 2400.0 |
| | ընդամենը | | | | **2400.0** |

## ԳԼՈՒԽ X

## ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՉՍՏԱՑԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ (ՉԱՓԱԳՐՈՒՄ)

| Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման | | | |
|---|---|---|---|
| բաժինը | խումբը | դասը | ծրագիրը |
| 01 | 06 | 01 | 14 |
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | |

## ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՉՍՏԱՑԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ (ՉԱՓԱԳՐՄԱՆ) 2014 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

### 1. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Անշարժ գույքի հաշվառման աշխատանքները կատարվում են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման իրականացման նպատակով: Հաշվառման արդյունքում ստացված քանակական և որակական տվյալները իդենտիֆիկացնում են անշարժ գույքը և արտացոլվում են իրավունքի պետական գրանցման վկայականներում:

Առաջնորդվելով անշարժ գույքի հաշվառման այս հիմնական սկզբունքներով՝ իրավունքների պետական գրանցման ընթացքում կադաստրի համակարգը նպատակ ունի լուծել օրենսդրությամբ առաջադրված կարևոր խնդիրներ, դրանք են՝ իրականացնել շուրջ 200 միավոր պետական սեփականություն հանդիսացող, իրավունքի պետական գրանցում չստացած, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում, հիմնականում դրանք վերաբնակեցման գոտիներում գտնվող անշարժ գույքի միավորներն են:

Վերոհիշյալ աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ է առաջին հերթին իրականացնել հաշվառման աշխատանքներ, առաջնորդվելով 2012 թվականի հուլիսի 1-ից գործող կարգերով:

Պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ճանաչումը ենթադրում է ԼՂՀ օրենսդրության պահանջների ճշգրիտ և անշեղ կատարմամբ ապահովել գույքի նկատմամբ դեռևս չգրանցված իրավունքների պետական գրանցում և այս իմաստով գրանցված իրավունքների երաշխավորման խնդրով է թելադրված իրավունքների պետական գրանցման, այսինքն՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական ճանաչման ընթացքում օրենսդրության պահանջների ճշգրիտ և անշեղ կատարումը, առանց որի անհնար է երաշխավորել գույքի նկատմամբ գրանցված իրավունքները:

### 2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2014 թվականին նախատեսվում է ավարտին հասցնել պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի միավորների հաշվառման և դրա հետ մեկտեղ գրանցման աշխատանքները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում:

2011 թվականի վերջում պետական մարմինների կողմից ներկայացված տվյալների համաձայն, պարզվել է, որ հանրապետության տարածքում առկա է մեծ քանակությամբ պետական սեփականություն հանդիսացող իրավունքի պետական գրանցում չստացած անշարժ գույքի միավորներ: Այդ գույքի մի մասը մինչև 2012 թվականի 1-ին կիսամյակի վերջը ստացել է իրավունքի պետական գրանցում, սակայն մեծ մասի նկատմամբ դեռևս հաշվառում չի իրականացվել: Քանի որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ԼՂՀ օրենքի համաձայն 2012 թվականի հուլիսի 1-ից անշարժ գույքի հաշվառման աշխատանքներն իրականացվում են որակավորված մասնագետների միջոցով, այլ ոչ թե համակարգի տարածքային ստորաբաժանումների հաշվառման մասնագետների կողմից, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի

նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման աշխատանքներն ավարտին հասցնելու համար, նպատակահարմար է հաշվառման աշխատանքները կազմակերպել պետական ծրագրի շրջանակներում, հաշվի առնելով չգրանցված գույքի առանձնահատկությունները` պաշտպանության բանակի գույքի տարածք մուտք գործելը և աշխատանքներ իրականացնելը:

Հաշվառման (չափագրման) աշխատանքների իրականացման արդյունքում հնարավոր կլինի պետական սեփականություն հանդիսացող գույքի նկատմամբ իրականացնել իրավունքի պետական գրանցում:

## 3. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագրի ֆինանսավորման համար անհրաժեշտ կլինի 4 600.0 հազ. դրամ: Պետական սեփականություն հանդիսացող բնակելի նշանակության անշարժ գույքի մեկ միավորի չափագրման աշխատանքների դիմաց գումարը, անկախ մակերեսից, կկազմի 23000 դրամ, իսկ հասարակական կամ արտադրական նշանակության անշարժ գույքի չափագրումը կիրականացվի ըստ հաստատված գնացուցակի:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**